Նայի՛ր, երկար նայի՛ր այս դիմանկարին. նրա մեջ, հազիվ նշմարելի ծպիտը թերեւս չի կրում հանապազօր մաքառումներով անցկացրած տառապալից կյանքի դրոշմը եւ չի մատնում հայրենաբաղձ հայի մշտագիշեր աչաց` լույսի դավանանքը, սակայն նա մեկն է հայ ազգի ծոցից ելած այն հսկա անհատականություններից, որոնց գոյությունը մեր պարգեւն է, իսկ կյանքը` երազանքը...

2017 թ. մայիսի 5-ին լրացավ վանեցի մեծն ուսուցչապետ Համբարձում Երամյանի ծննդյան 160-ամյակը. եզակի անհատ ոչ միայն հայոց, այլեւ համաշխարհային պատմության մեջ:

Մարդ, որն ընդամենը 11 տարեկանում ծաղիկ հիվանդությունից կորցնում է աչքի լույսը, բայց հոգու եւ մտքի լույսի ուժով չի ընդհատում ուսումը եւ դպրոցն ավարտելուն պես կարգվում է ուսուցչի օգնական, իսկ երկու տարի անց` ուսուցիչ:

19 տարեկանում հիմնում է «Խնամատար» որբանոց-վարժարանը, որի շնորհիվ էլ համերկրացիներից շատերին ազատում է սովի ճիրաններից եւ կրթում:

1888 թ., ի նպաստ վարժարանի գոյության, վաճառում է հայրական տունն ու այգին:

1890-ական թթ. սկզբներին ենթարկվում է թուրք իշխանավորների հալածանքներին, իսկ 1896 թ.` երջանիկ պատահականությամբ ազատվում ֆիզիկական հաշվեհարդարից: Արհավիրքները մեղմվելուն պես 1896 թ. օգոստոսին Երամյանը վերաբացում է վարժարանը:

Ի նշան սիրելի ուսուցչապետի անմնացորդ նվիրումի` նրա աշակերտների ծնողներն ու բարեկամները որոշում են Երամյանի գլխավորած վարժարանի համար հատուկ դպրոցական շենք կառուցել, իսկ նրա համար էլ` մի տուն: Աշխատանքները սկսվում են 1904 թ. եւ հաջողությամբ ավարտվում 1905 թ.: Հենց այս թվականից էլ նոր դպրոցը պաշտոնապես անվանվում է հիմնադիր-տնօրենի անունով` Երամյան վարժարան:

Մինչեւ 1915 թ. կրթական մակարդակով, ուսուցչակազմով կրթօջախը Վանի 21 դպրոցների շարքում առաջինն էր: Դա են վկայում եվրոպացի միսիոներները, հյուպատոսները, Վանի իրարահաջորդ թուրք կուսակալները եւ այլք:

Կույր ուսուցչապետը դասավանդում էր հայոց լեզու, գրաբար, ազգային եւ ընդհանուր պատմություն, աշխարհագրություն եւ ի զարմանս շատերի` նաեւ ֆրանսերեն:

1913 թ. սեպտեմբերի սկզբին մեկնում է Տփղիս, ապա Եգիպտոս` հօգուտ դպրոցի հանգանակություն կազմակերպելու հույսով: Դեպքերի արգելառիթ զարգացումները նրան ակամա ստիպում են ապրել Աղեքսանդրիայում, որտեղ դասավանդում է Պողոսյան վարժարանում:

1920-ական թթ. Երամյանը ձեռնամուխ է լինում «Յուշարձան Վան-Վասպուրականի» երկհատոր աշխատության ստեղծման գործին եւ այն ավարտում 1929 թ. տարեսկզբին: Ըստ ականատեսի վկայության, երբ 1929 թ. դեկտ. 19-ին նրան կանչում են առաջնորդարան եւ փոխանցում երկհատորյակը, վերցնում է գրքերը, սեղմում կրծքին եւ ասում` Այ կրնամ հանգիստ մեռանիլ, եւ հաջորդ օրը` վախճանվում:

Հայտնի է մեծն ուսուցչապետի կտակը որդիներին, որտեղ ցավով նշում է, որ իրեն այդպես էլ չհաջողվեց Վանի ազատությունը տեսնել եւ ավերված վարժարանի շենքը վերաշինել, ուստի պատգամում է հնարավորության դեպքում իրականացնել երազանքը` վերաշինել Երամյան վարժարանը:



Համբարձում Երամյան

160

1857 - 2017

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ՍԻՐԱՔ ՍԱՐՀԱԴՅԱՆ


ՏԻԳՐԱՆ ՉԻԹՈՒՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒԼՈՂԼՅԱՆ

ՍԵԹ ԱՐՍԵՆՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՍՈՒԼԱԽՅԱՆ


ԱՎԵՏԻՍ ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ


ՀԱՅԿ ԱՃԵՄՅԱՆ


ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ (ՏԵՎԿԱՆՑ)

ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ. 1904-1905 ԹԹ., ՎԱՆ, ԱՅԳԵՍՏԱՆ


«ՅՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ» ԵՐԿՀԱՏՈՐՅԱԿԸ, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 1929 Թ.